**«EU4Energy» մրցույթ. «Օգնիր Տատիկին»**
**(11 – 19 սեպտեմբերի, 2019թ.)**

## <u>Գործողության կոչ</u>

**Դու ապրու՞մ ես Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում կամ Ուկրաինայում: Այդ դեպքում ինչու՞ չմասնակցել «EU4Energy»-ի («ԵՄ-ն էներգետիկայի համար») նոր մրցույթին[1]: #EU4Energy Տատիկը վերադարձել է էներգաարդյունավետության բարձրացման մասին նոր հարցերով: Մեր սոցիալական մեդիահարթակներում ճիշտ պատասխանիր նրա երեք հարցերից առնվազն մեկին ու օգնիր Տատիկին, որպեսզի նա էլեկտրաէներգիան գումար խնայի: Դու հնարավորություն կստանաս շահել 10 մրցանակներից մեկը, այդ թվում՝ գլխավոր մրցանակը, որը 3D տպիչ սարք է:**




[1] Մրցույթն անցկացվում է Եվրոպական հանձնաժողովի ֆինանսավորմամբ գործող EU4Energy հաղորդակցական նախագծի կողմից

## ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՆՈՆՆԵՐ

<u>ՄՐՑՈՒՅԹԻ ԹԵՄԱՆ.</u> Սոցիալական մեդիա մրցույթը կազմակերպել է «EU4Energy» հաղորդակցական ծրագիրը: Մրցույթի թեման **էներգետիկ արդյունավետությունն է**: Մրցույթի ամբողջ ընթացքում #EU4Energy Տատիկը երեք հարց կուղղի այն մասին, թե ինչպես կարելի է էլեկտրաէներգիա և գումար խնայել՝ ավելի էներգաարդյունավետ մոտեցման շնորհիվ: Սա յուրաքանչյուր դեպքում ճիշտ պատասխանն ընտրելու կոչ է՝ օգնելով Տատիկին ավելի քիչ էլեկտրաէներգիա սպառել:

<u>ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ.</u> Մրցույթը բաց է Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի՝ տասնութ (18) տարին լրացած քաղաքացիների (անհատների) համար, ովքեր ունեն անձնական օգտահաշիվներ Facebook-ում, Instagram-ում կամ VKontakte-ում: «EU4Energy» հաղորդակցական ծրագրի աշխատակիցները, փորձնականները կամ թիմի անդամների գործընկերները, ինչպես նաև նշված աշխատակիցների մերձավոր բարեկամներն ու ընտանիքի անդամներն իրավասու չեն մասնակցելու մրցույթին:

<u>ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ.</u> Մրցույթը կազմակերպել է «EU4Energy» հաղորդակցական ծրագիրը («Կազմակերպիչ»): Մրցույթը որևէ կերպ կապված չէ և չի հովանավորվում / աջակցվում / ղեկավարվում Facebook-ի կողմից:

<u>ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ.</u> Մրցույթը կանցկացվի **2019 թվականի սեպտեմբերի 11-ից մինչև 19-ն** ընկած ժամանակահատվածում և բաղկացած կլինի երեք հարցերից: Օգտատերերը կարող են մասնակցել մրցույթին իրենց պատասխանները թողնելով Տատիկի յուրաքանչյուր հարցի տակ՝ մեկնաբանությունների բաժնում: Հարցերը կհրապարակվեն [Facebook](#)-ում, [Instagram](#)-ում և [Vkontakte](#)-ում «EU Neighbours East»-ի («ԵՄ Արևելյան հարևաններ») էջերում:

Պատասխանները պետք է հրապարակվեն անհատական, անձնական օգտահաշիվներից: Գործարար նպատակներով օգտագործվող օգտահաշիվներն ինքնաբերաբար կորակազրկվեն մրցույթին մասնակցությունից: Յուրաքանչյուր անձի թույլատրվում է հրապարակել մինչև մեկ պատասխան՝ յուրաքանչյուր հարցի համար: Յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը կհրապարակվի տվյալ հարցի հրապարակումից հետո 48 ժամվա ընթացքում: Ճիշտ պատասխանը հրապարակվելուց հետո տվյալ հարցի տակ այլ պատասխաններ չեն ընդունվի:

<u>ՀԱՂԹՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ.</u> Տատիկի երեք հարցերից գեթ մեկին ճիշտ պատասխանած մասնակիցները կներառվեն վիճակահանության մեջ՝ հաղթողին որոշելու նպատակով: Մասնակցի յուրաքանչյուր ճիշտ պատասխանը ենթադրում է վիճակահանության մասնակցության մեկական մուտք (երեք հարցերին ճիշտ պատասխանելը ենթադրում է վիճակահանության մասնակցության երեք մուտք): Հաղթողներին պարզելու նպատակով կկիրառվի պատահականության ծրագրային ապահովում (random.org): Պատահականության ցուցակի պատրաստելու

պես, դրա առաջին համարը կստանա գլխավոր մրցանակը: Հաջորդ ինը համարները ևս կպարգևատրվեն մրցանակներով: Հաղթողները կորոշվեն մրցույթում ներգրավված սոցցանցերի էջերում Տաńիկի բոլոր երեք հարցերի հրապարակումից հետո:

**ՄՐՑԱՆԱԿ.** Հաղթողներին կհանձնվի մինչև 10 մրցանակ[2]: Հիմնական հաղթողը կպարգևատրվի գլխավոր մրցանակով՝ 3D տպիչ սարքով: Մրցանակը չի կարող փոխանցվել և պետք է ընդունվի որպես պարգևատրություն: Հաղթողը չի կարող պահանջել կանխիկ գումար կամ փոխարինող մրցանակ: Մրցույթի կարգավիճակի մասին տեղեկություն ստանալու համար պետք չէ կապվել կազմակերպիչի հետ: Հաղթողները իրենց տրամադրած կոնտակտային տվյալների միջոցով կազմակերպիչի կողմից կստանան ծանուցում՝ արդյունքների հայտարարումից հետո: Եթե հաղթողը ծանուցում ստանալուց հետո չորս աշխատանքային օրվա ընթացքում կապ չի հաստատում կազմակերպիչի հետ, մրցանակը հանձնվում է պատահական ցուցակում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ.** Կազմակերպիչն իրեն իրավունք է վերապահում որակազրկել ցանկացած անհատի, ով խոչընդոտում է մրցույթի ընթացքին, խախտում է դրա կանոնները կամ գործում է վնասարար կամ անազնիվ կերպով: Առցանց գրառման հեղինակի վերաբերյալ վեճի պարագայում գրառման հեղինակ կհամարվի մուտք գործելիս օգտագործված օգտահաշվի լիազոր սեփականատերը:

**ԱՐՏՈՆՈՒՄ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ.** Մուտք գործելով՝ մասնակիցն արտոնում է և չի խոչընդոտում կազմակերպիչին, Facebook-ին, վերջիններիս համապատասխան հիմնադիր և դուստր կազմակերպություններին, ստորաբաժանումներին ու նրանց համապատասխան պաշտոնատար անձանց, տնօրեններին, աշխատակիցներին ու գործակալներին («արտոնյալ կողմեր»), որոնք պատասխանատվություն են կրում մրցույթի մասնակցությամբ կամ ցանկացած մրցանակի ստացմամբ կամ օգտագործմամբ պայմանավորված յուրաքանչյուր պահանջի համար: Նշվածը ներառում է, բայց չի սահմանափակվում՝ ա) մրցույթին մարդու չարտոնված միջամտությունը, բ) տեխնիկական սխալները, գ) տպագրական սխալները, դ) փոստային նամակի ուշացած հասնելը կամ առհասարակ չհասնելը, և (ե) մրցույթի վարչարարությամբ պայմանավորված սխալները: Մասնակիցը հրաժարվում է որևէ փաստաբանական վճարի կամ այլ վնասի փոխհատուցման իրավունքից, այդ թվում (բայց չսահմանափակվելով) պատժիչ, հետևանքային, ուղղակի կամ անուղղակի վնասների համար:

**ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ.** Մուտք գործելիս մասնակցի ներկայացրած ցանկացած տեղեկատվություն տրամադրվում է EU4Energy հաղորդակցական ծրագրին, այլ ոչ Facebook-ին: Մասնակիցը համաձայնվում է կազմակերպիչի կողմից (ըստ անհրաժեշտության) իր անվան և վերջինիս օգտահաշվի անվան օգտագործմանը հաղթողների ցանկացած ցանկում: Այս

[2] Մրցանակները ներառում են արևային մարտկոցներ, արտաքին մարտկոցներ (power banks), գովազդային նյութեր

տեղեկատվությունը կօգտագործվի հաղթողների հետ կապ հաստատելու համար: Հաղթողների և նրանց օգտահաշիվների անունները կարող են օգտագործվել գովազդային նպատակներով՝ առանց հետագա վճարման կամ քննարկման:

ՎԵՃԵՐ. Մասնակիցը համաձայնվում է, որ մրցույթի կամ մրցանակի հանձնման հետ կապված յուրաքանչյուր և բոլոր տեսակի վեճերը, պահանջներն ու պատճառաբանությունները պետք է լուծվեն անհատապես՝ առանց որևէ խմբային գործողության ձևաչափի, և բացառապես Բրյուսելում տեղակայված համապատասխան դատարանի կողմից: Մրցույթի հետ կապված սույն Պաշտոնական կանոնների ստեղծման, վավերության, մեկնաբանման և կիրառելիության հետ կապված բոլոր խնդիրները և հարցերը, մասնակիցների իրավունքներն ու պարտավորությունները կամ կազմակերպչի իրավունքներն ու պարտավորությունները պետք է ղեկավարվեն և վերահսկվեն Բելգիայի օրենսդրությանը համաձայն՝ առանց որևէ իրավունքի ընտրության կամ օրենքի հակասության կիրառման (լինի դա Բելգիայի թե որևէ այլ իրավասություն), ինչը կարող է հանգեցնել բացի Բելգիայից ցանկացած այլ իրավասության օրենքների կիրառման:

ԿԱՆՈՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ. Մրցույթին մասնակցությունը ենթադրում է վերոնշյալ կանոնների լիարժեք ընդունում:

ՀԱՐՑԵՐ. Մրցույթի հետ կապված ցանկացած հարց և հարցում կարելի է ուղարկել EU4Energy@ecorys.com էլեկտրոնային հասցեով: